«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիր»

Համաձայնագրի իրականացման արդյունքում ստացված օգուտը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, այդ թվում՝ փոքրամասնության

Մարդու իրավունքների պաշտպանությունը, այդ թվում նրանց, ովքեր պատկանում են փոքրամասնություններին, հանդիսանում է միջազգային իրավունքի սկզբունք և Եվրամիության գլխավոր արժեքներից մեկը: «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» իրականացումը երկրում մարդու իրավունքների պաշտպանության շարժականությունը, այդ թվում՝ փոքրամասնության, տեղափոխում է որակապես նոր ոլորտ: Կողմերը պարտավորվում են ուժեղացնել հարգանքը հիմնական ազատությունների, մարդու իրավունքների, այդ թվում՝ այն մարդկանց իրավունքների, ովքեր պատկանում են փոքրամասնություններին, ժողովրդավարական սկզբունքների, օրենքի գերակայության, և լավ կառավարման նկատմամբ, որոնք հիմնված են կողմերի ընդհանուր արժեքների վրա: Այս առումով հարկավոր է նշել հետևյալը.

- Ի հայտ կգան նոր հնարավորություններ՝ իրականացնելու համար փոքրամասնության սոցիալական, քաղաքական, էլեկտորալ, լեզվական և մշակութային իրավունքները, քանի որ երկրում կներդրվի Եվրոպական պրակտիկան և փորձը հանդուրժողականության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում
- Կբարձրանա փոքրամասնության զբաղվածության և սոցիալական ապահովության մակարդակը
- Կստեղծվի հավասար հնարավորություններով, բարձր հակախտրական չափանիշներով և սոցիալական ապահովությամբ միջավայր

- Կբարձրանա փոքրամասնության և քաղաքացիական իրավահավասարության մակարդակը սոցիալական ներգրավման և քաղաքացիական իրավահավասարության մակարդակը
- Աջակցություն կցուցաբերվի փոքրամասնությունից մարդկային ռեսուրսների զարգացմանը և մասնագիտական կրթության որակի բարձրացմանը
- Աջակցություն կցուցաբերվի էթնիկ փոքրամասնության պատմա-մշակութային ինքնությանը, փոքրամասնությանը պատկանող արվեստի գործիչներին և նրանց շարժականությանը, ԵՄ լավագույն փորձի համապատասխան կիրականացվի մշակութային և պատմական հուշարձանների պահպանումը և համապատասխան պաշտպանումը:
- Կխրախուսվի էթնիկ փոքրամասնության համայնքների և կազմակերպությունների համագործակցումը Եվրոպական գործընկերների հետ

Էթնիկ փոքրամասնության երիտասարդներին աջակցություն կցուցաբերվի եվրոպական մակարդակով ուսումնական, կրթական, և մասնագիտական փոխանակման ծրագրերի իրականացմանը:

Փոքրամասնության տնտեսական և սոցիալական շահերի առավել պաշտպանության նպատակով կմշակվի և կիրականացվի Եվրոպական չափանիշներով տարածաշրջանային քաղաքականություն:

Հրատարակությունը պատրաստված է Համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանի կողմից» Ժողովրդավարության աջակցման Ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ (NationalEndowmentforDemocracy), «Աջակցում խիտ բնակեցված տարածաշրջաններում ազգային փոքրամասնությունների քաղաքացիական հասարակության զարգացմանը» նախագծի շրջանակներում: Հրատարակության բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանը»: «Բազմազգ Վրաստանի» հայացքները կարող են չհամընկնել ժողովրդավարության աջակցման Ազգային հիմնադրամի կարծիքին: